ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ԳՅՈՒՂԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՄԻՇՅԱՆ

Սոցիոլոգիայի՝ որպես ինքնուրույն գիտության սկզբնավորման շրջանից մինչ այսօր սոցիոլոգիական գիտելիքը կենտրոնացել է արդիականացման (մոդեռնիզացիա) հիմնախնդիրների հայեցակարգման վրա՝[1] առարկայական տիրույթից հաճախ դուրս թողնելով մինչարդիականության ժամանակաշրջանին բնորոշ այնպիսի սոցիալական երևույթներ, ինչպիսին են գյուղը և գյուղական համայնքը: Այսօր արևմտյան սոցիոլոգիական գրականության մեջ հազվադեպ են «գյուղը» մեկնաբանող սոցիոլոգիական հայեցակարգերը: Գյուղը, որպես սոցիոլոգիական տեսության օբյեկտ, առավել հետաքրքրել է քաղաքի ուսումնասիրության տեսանկյունից. *հատկապես առանձնացվել են ուրբանիզացիայի համատեքստում գյուղ-քաղաք տեղաշարժերը, քաղաքի (ուրբան) մոդելով գյուղի (համայնքի) վերափոխման և զարգացման հեռանկարները և այլն:* Դասական սոցիոլոգիական գրականության մեջ գյուղը հիշատակվում է համայնք-հասարակություն *(Gemeinschaft և Gesellschaft)* փոխհարաբերությունը մեկնաբանող հայեցակարգերում[2], ուր ավանդական-համայնականի կրող դիտարկվում է գյուղը, գյուղական համայնքը, իսկ արդիական-հասարակականի կրող՝ քաղաքը: Դեռևս XIX դարավերջից առավել նշանակալի առաջընթաց է ունեցել քաղաքի սոցիոլոգիան. թե՛ սոցիոլոգիայի դասականները, թե՛ արդի սոցիոլոգիայի ներկայացուցիչները հայեցակարգային վերլուծության են ենթարկել քաղաքը, քաղաքային կյանքն ու քաղաքաբնակին[3]: Քաղաքը, որպես արդիական (արդյունաբերական, հետարդյունաբերական) հասարակության խորհրդանիշ, դարձել է սոցիոլոգիական ուսումնասիրության նշանակալի օբյեկտ: Քաղաքը դիտարկվում է որպես սոցիալական փոփոխությունների հիմք և միջավայր, իսկ գյուղը՝ անփոփոխ և փոփոխությունը բացառող սոցիալական միավոր[4]: Իհարկե, վերոնշյալ տարբերակումը տեղին է գյուղը և քաղաքը որպես իդեալական տիպեր[5]

---

[1] Տե՛ս **Штомпка П.** Социология социальных изменений. М., 1996, էջ 100:

[2] Տե՛ս **Теннис Ф.** Общность и общество. СПб., 2001:

[3] Տե՛ս **Вебер М.** История хозяйства: Город. М., 2001, **նույնի՝** Избранные произведения. М., 1990, **Зиммель Г.** Большие города и духовная жизнь // "Журнальный зал", 2002 № 3-4, **Wirt L.** Urbanism, as way of life. In. R. Sennet. Classical essays in urban culture. Appleton Century Grofts.New York. 1969, **Бауман З.** Город страхов, город надежд. М., 2008, **Парк Р.** Город как социальная лаборатория // "Социологическое обозрение", 2002, т. 2, № 3:

[4] Տե՛ս **Вукосавлевич С.** История крестьянского общества (социология обитания) // "Социология в странах Центральной и Восточной Европы: Хрестоматия". М., 2005, էջ 595-596:

[5] Տե՛ս **Вебер М**. Избранные произведения, էջ 132:

դիտարկելու պարագայում, քանի որ սկզբունքորեն անփոփոխ և արդիականության ազդեցությունը չկրող միավոր գոյություն չունի: Գյուղ-քաղաք հակադրամիասնականության՝ որպես իդեալականացված բևեռների դիտարկումը մեթոդաբանական հնարավորություններ է ստեղծում այդ սոցիալական միավորների ուսումնասիրության համար:

Գյուղը, գյուղական համայնքը, գյուղական կենսակերպն ու մշակույթը հիմնականում եղել են ազգագրական և/կամ մարդաբանական ուսումնասիրությունների առարկայական տիրույթում, իսկ գյուղի սոցիոլոգիան, որպես ինքնուրույն գիտակարգ, միջին մակարդակի սոցիոլոգիական տեսություն, զարգացել է որոշ արևելաեվրոպական, նախկին ԽՍՀՄ, ասիական և աֆրիկյան զարգացող երկրներում: Գյուղի սոցիոլոգիայում փորձ է կատարվում գյուղը դիտարկել ոչ թե քաղաքակենտրոն դիրքերից, այլ հասարակությունը (նաև քաղաքը) դիտարկել գյուղակենտրոն դիրքերից: Այս դեպքում գյուղը դիտարկվում է որպես տնտեսական և սոցիալ-մշակութային միավոր: Առաջին դեպքում կարևորվում է գյուղատնտեսության՝ որպես տնտեսության կարևորագույն և նշանակալի ճյուղի, մյուս դեպքում՝ գյուղական համայնքի՝ որպես ավանդական արժեքներ կրող և վերարտադրող միավորի դերն ու նշանակությունը: Եթե սոցիալ-տնտեսական դիրքերից անվիճելի է գյուղի, մասնավորապես՝ գյուղատնտեսության, համահասարակական նշանակությունը, ապա երկրորդ դեպքում չկա միանշանակություն: Այստեղ կենտրոնական հարցադրում է դառնում այն, թե ***ինչպիսի դեր և սոցիալական նշանակություն ունի գյուղը ազգային ինքնության ավանդական տարրերի վերարտադրման և տարածման գործընթացում:***

Կա վարկած, համաձայն որի՝ գյուղը, որպես համայնական արժեքներ կրող և պահպանող սոցիալական միավոր, հանդես է գալիս ազգային ինքնության ավանդական տարրեր վերարտադրող մեխանիզմի դերում: Իսկապես, ավանդական հասարակություններին վերագրվող *ի ծնե ստատուսի*, *անձնավորված փոխհարաբերությունների*, *աֆեկտիվ կապերի*, *կոլեկտիվ գիտակցության և կայուն պարզ արժեքների առաջնայնությունը* պատմականորեն բնորոշ են եղել գյուղական համայնքներին, ի հակադրություն քաղաքը բնորոշող *ձեռքբերովի ստատուսի*, *անդեմ փոխհարաբերությունների*, *աֆեկտիվ չեզոք կապերի և ոչ հաստատուն բարդ արժեքների առաջնայնության*[6]*:* Այս տեսանկյունից հիմնավոր է դառնում վերոնշյալ վարկածը՝ գյուղին վերագրելով ազգային ինքնության ավանդական տարրերի վերարտադրման և պահպանման դերը: Սակայն այստեղ նշմարվում է այն ոչ միանշանակությունը, որը վերը նկատեցինք: Եթե գյուղը, իսկապես, կրողն է ավանդական-համայնական արժեքների, ապա *որո՞նք են արժեքների վերարտադրման մեխանիզմները (1) և ինչպիսի՞ն են դրանց տարածման ուղիները (2):*

---

[6] Տե՛ս **Парсонс Т.** Понятие общества: компоненты и их взаимоотношения // “Американская социологическая мысль”. М., 1996, էջ 68-69:

Հղում կատարելով Գլեբ Ուսպենսկուն՝ Դավիթ Անանունը նկատում է, որ «գյուղացին բնության ամեն կարգի պատահարները կապում է Աստծո անվան հետ, իսկ հասարակական կյանքի անցուդարձերը՝ թագավորի: Գյուղացին բնության և հեղինակության գերին է»[7]: Իսկապես, սոցիալական փոփոխությունները դիտարկելիս՝ «գյուղը» դառնում է ազդեցության օբյեկտ, իսկ «քաղաքը»[*]՝ սուբյեկտ: Պատճառը մի կողմից քաղաքի անմիջական ընդգրկվածությունն է սոցիալական փոփոխությունների համակարգում՝ որպես միջավայր և ակտիվ սուբյեկտ[8], մյուս կողմից՝ քաղաքի՝ որպես հասարակական իդեալի սիմվոլիկան գյուղացու պատկերացումներում: Դա են փաստում արդի հասարակություններում քաղաքի՝ տնտեսական (կապիտալիստական), քաղաքական և սոցիալ-մշակութային մոդելով գյուղական տնտեսությունների, վարչական համակարգերի և համայնական փոխհարաբերությունների վերափոխումները[9]:

Այստեղ տեղի է ունենում ինքնության ավանդական և ժամանակակից տարրերի բախում: Գյուղական ավանդական ինքնության վերարտադրման գործընթացը կանխվում է, երբ ինքնություն ստեղծող գործոնները կրում են արտաքին բնույթ, երբ հասարակական իդեալը ոչ թե ներքին միջավայրն է, այլ գտնվում է դրսում. «գյուղը» դադարում է լինել իդեալ և «քաղաքն» է դառնում այդպիսին: Արդի հասարակություններում ազգային ինքնության ճգնաժամը սկիզբ է առնում քաղաքում՝ կրելով արդի քաղաքակրթության արժեհամակարգը, անխտրականորեն փոխառելով գլոբալը: Ինչպես է. Գիդենսն է նկատում, համաշխարհայնացումը, դրան զուգահեռվող արդիականացման գործընթացները սկզբունքորեն անկառավարելի են, օժտված են վերահսկողությունից հեշտությամբ դուրս գալու հատկությամբ, ու թեև մեզ թվում է, թե դրանք ընթանում են ուղիղ հունով, սակայն ժամանակ առ ժամանակ կարող են դուրս գալ հունից, տարածվել այլ ուղղություններով, և նրա ընթացքը երբեք կանխատեսելի չէ[10]:

Սոցիալական փոփոխությունների նմանօրինակ ընթացքը թույլ է տալիս առաջ քաշել այն վարկածը, համաձայն որի՝ հնարավոր չէ «ազգային ավանդական ինքնության» վերածնունդ գյուղից – քաղաք ազդեցությամբ, քանի որ ընթացքի հիմքը նորն է՝ «առաջադեմը» (տվյալ դեպքում՝ քաղաքը): Արդի կրթությունը, տնտեսությունը և իրավունքը ձևավորվում և ինստիտուցիոնալացվում են քաղաքում՝ փոխանցվելով գյուղին: Գյուղը քաղաքում տեղի ունեցող սոցիալական փոփոխության կրողն է:

Գյուղը, որպես սոցիալական ֆենոմեն, կարծրատիպային համակարգ, առավել նշանակալի դեր ունի քաղաքաբնակի ինքնության ավանդական տարրերի վերարտադրման գործընթացում, քան գյուղացու: Քաղաքից է, որ գյուղը երևում է որպես «ավանդականը», «բնականը», «մաքուրը», «ա-

---

[7] **Դ. Անանուն**, Հայության հավաքական զորությունը // «Մշակ», 1915, № 178, էջ 3:

[*] Այստեղ գյուղ և քաղաք հասկացությունները դրվում են չակերտների մեջ, քանի որ դիտարկվում են որպես իդեալականացված ֆենոմեններ, հակադրություններ, ուր առաջինը կրողն է ավանդական-համայնականի, դրա խորհրդանիշն է, իսկ երկրորդը արդիական-հասարակականի կրողն է և խորհրդանիշը:

[8] Տե՛ս **Бауман З.,** նշվ. աշխ.:

[9] Տե՛ս **Մ. Գաբրիելյան**, Հայաստանի Հանրապետության արդի գյուղացիությունը (ազգագրական ուսումնասիրություն), Եր., 2001:

[10] Տե՛ս **Giddens A.** The Consequences of Modernity. London, 1990, էջ 136:

ռողջարարը» կրող և վերարտադրող միջավայր, «թանգարան», ուր կարելի է գտնել ազգային ավանդական ինքնության իդեալականացված տարրեր, ի տարբերություն քաղաքին վերագրվող սիմվոլիկ հատկանիշերի՝ «արդի», «արհեստական», «կեղտոտ», «անառողջ»:

Իսկապես, սոցիալական փոփոխությունների սոցիոլոգիական մեկնաբանման հիմքում միշտ փոփոխության սուբյեկտ է եղել «քաղաքը»: Նույնիսկ XX դարասկզբին հայ հասարակության (նախաինդուստրիալ հասարակության), ազգի ազատագրման, հասարակական համախմբման և առաջընթացի բացատրության ընթացքում հայ մտածողները գյուղը և գյուղացուն դիտում էին որպես այդ գործընթացի կրավորական և ոչ նշանակալի օբյեկտ: Դավիթ Անանունը նշում է, որ ազգային առաջընթացի հիմքում գյուղացին չունի առաջնային դերակատարություն, գյուղացին հասարակական, ազգային շարժման «նեցուկն է, բայց ոչ՝ ղեկավարը»[11]:

Այսպիսով, ակտուալ է դառնում այն հարցադրումը, թե *արդյոք արդի գյուղը անզոր է, ենթակա է միակողմանի տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային ազդեցության, սոցիալական փոփոխությունների կրավորական օբյեկտ է, թե հնարավոր է գյուղի «վերածնունդ», գյուղի ավանդական-համայնական մոդելի պահպանում և վերարտադրում, գյուղ-քաղաք ոչ միակողմանի, այլ ռեֆլեքսիվ փոխհարաբերության ձևավորում:*

Արդիականացման և համաշխարհայնացման ներկայիս գործընթացները և դրանց շրջանակներում տեղի ունեցող սոցիալական փոփոխությունները ու տեղաշարժերը, համաձայն սոցիոլոգիական արդի մոտեցումների, օբյեկտիվորեն նպաստում են ավանդական-համայնականի վերափոխմանն ու փոխարինմանը: Գյուղական, ինչպես նաև ազգային և մարդկային արժեքների պահպանման և վերարտադրման համար սոցիալական փոփոխությունների գործընթացի նպատակաուղղված կառավարման անհրաժեշտություն է առաջանում[12]: Ինչպես է. Մարգարյանն է նկատում. «Այսօր ավելի, քան երբեք, մարդկության էվոլյուցիան պետք է գիտակից կերպով կարգավորել»[13]:

Իսկապես, արդի պայմաններում գյուղի՝ որպես սոցիալական ինքնուրույն միավորի պահպանման համար անհրաժեշտ է նպատակաուղղված քաղաքականություն իրագործել՝ *«գյուղի» պահպանման համար անհրաժեշտ սոցիալական տեխնոլոգիաների մշակմամբ և կիրառմամբ:* Այս պարագայում, մինչ համարժեք սոցիալական տեխնոլոգիաների շուրջ հայեցարգային մոտեցումների առաջադրումը, անհրաժեշտ է պատասխանել ամենաակտուալ հարցերից մեկին՝ *որքանո՞վ է արդի ազգային պետություններին անհրաժեշտ գյուղի ավանդական և համայնական տեսակի պահպանումն ու վերարտադրությունը:*

---

[11] **Դ. Անանուն**, նշվ. աշխ., էջ 3:

[12] Տե՛ս **Vermishyan H.** Sociologist as the subject of national identity policy// “Dialogue of cultures: management of socio-cultural processes”, collection of scientific papers of the conference, Saint-Petersburg, 2011, էջ 254-258:

[13] **Маргарян Э. С.** Гуманизм XIX столетия. Идеология самосохранения человечества. Ер., 2008, с. 45.

Համաշխարհային ինտեգրատիվ գործընթացները սոցիալական փաստեր[14] են, որոնցից անմասն չի կարող մնալ արդի որևէ հասարակություն: Սակայն, ինչպես Յու. Հաբերմասն է նկատում, այս և յուրաքանչյուր այլ ինտեգրացիոն գործընթաց ոչ միայն կարգավորող, այլ նաև հակասական (կոնֆլիկտային) բնույթ ունի, ընդ որում՝ այդ հակասականությունը դրսևորվում է ինքնության ճգնաժամի տեսքով, որից խուսափելու համար անհրաժեշտ է, որպեսզի համակարգն ընդգծի իր յուրահատկություններ-ը[15]: Այս տեսանկյունից հասարակության յուրահատկությունները, այլ հասարակություններից նրան տարբերակող հատկանիշները ամրագրված են հենց ազգային ավանդական կերպարում, որի կրողն է, ինչպես արդեն նկատեցինք, «գյուղը»՝ որպես սոցիալական յուրատեսակ համակարգ: Նման տարբերակիչ արժեքորմատիվ համակարգը Ի. Վալերշտեյնը կոչում է ***գեոմշակույթ***[16]***,*** և գյուղի պահպանման սոցիալական տեխնոլոգիաների բնութագրման ժամանակ հենց գեոմշակույթի վերարտադրման մեխանիզմների առաջադրումն է, որ ամենաակտուալ խնդիրն է դառնում:

Այս առումով գյուղի սոցիոլոգիական դիտարկման համար անհրաժեշտ է տալ գյուղի օպերացիոնալ սահմանումը և, համապատասխանաբար, գյուղը տարբերակել ըստ երեք հիմնարար բաղադրիչների՝ ***հող, ընտանիք և համայնք,*** փոխկապվածության *(տե՛ս գծապատկեր 1):* Այս բաղադրիչները գյուղը որպես ինքնուրույն սոցիալական միավոր տարբերակող բնորոշիչներն են, որոնց ուսումնասիրությամբ է հնարավոր վեր հանել գյուղի սոցիալական պատկերը, և որոնց ուղղված քաղաքականությամբ է հնարավոր գյուղի նպատակաուղղված կառավարումը: Գյուղում ***հող-ընտանիք-համայնք*** փոխհարաբերակցության համադիտարկումը թույլ կտա վեր հանել նաև գեոմշակույթի վերարտադրության հնարավորությունները:

Գծապատկեր 1



[14] Տե՛ս **Է. Դյուրկհեյմ**, Սոցիոլոգիական մեթոդի կանոնները, Եր., 2006:

[15] Տե՛ս **Habermas J.** The theory of communicative action: reason and rationalization of society // Beacon press, 1897:

[16] Տե՛ս **Wallerstein I.** The Modern World-System as a Capitalist World-Economy // "The globalizatin reader" edited by Frank J. Lechner, John Boli, third edition, 2008, Blackwell Publishing Ltd, էջ 55:

Արդի միտումները ցույց են տալիս, որ կապիտալիստական շուկան ներթափանցել է գյուղ, գյուղական միջավայր՝ նպաստելով ժամանակակից գյուղում ***վարձու աշխատանքի ինստիտուտի*** ձևավորմանը: Վարձու աշխատանքը միշտ այլընտրանքային բնույթ ունի. եթե չի բավարարում աշխատանքի դիմաց փոխհատուցվող արժեքը, կամ եթե կա ավելի բարձր վարձատրվող աշխատանք, ապա գյուղացին հեշտությամբ կարող է փոխարինել այն նորով՝ փոխելով նաև աշխատանքի բնույթը: Իսկ երբ շուկայական, ապրանքաիրային փոխհարաբերությունները ինստիտուցիոնալացվում են՝ դառնալով առօրյայի մասը, նպաստում են ինքնության ավանդական տարրերի՝ *անձնավորված փոխհարաբերությունների, աֆֆեկտիվ կապերի և կայուն պարզ արժեքների* վերափոխմանը[17]: Արժենորմատիվ նման փոխակերպումները օրինաչափ են և անխուսափելի, դա է արդիական հասարակությունների սոցիալական միտումը: Հետևաբար, գյուղը դիտարկել որպես ավանդական-համայնական արժեքներ փոխանցող մեխանիզմ՝ արդարացված չէ, քանի որ դրա համար գյուղը պետք է մեկուսացնել արդիականացման գործընթացից, ինչը անհնար է (կամ, գոնե, ոչ առաջադիմական):

Հողն է գյուղի ամենանշանակալի և շոշափելի կապիտալը: Առաջնային է հողի տնտեսական նշանակությունը, սակայն ոչ պակաս կարևոր է դրա սոցիալ-մշակութային արժեքը: Հողի հետ հարաբերակցության մեջ է բացահայտվում գյուղական ընտանիքի, համայնական կենսակերպի, առօրյա մշակույթի ու դերաստատուսային բաշխվածության բնույթն ու բովանդակությունը: Արհեստական կամ ոչ բնական միջամտությունների բացառմամբ գյուղի՝ որպես ավանդական-համայնական արժեքներ վերարտադրող մեխանիզմի պահպանման սակավ հնարավորություններից մեկը ավանդական գյուղական կենսակերպի՝ որպես օբյեկտիվորեն սոցիալական կապեր վերարտադրող մեխանիզմի ապահովումն է: Այս տեսանկյունից ***գյուղացի (գյուղական ընտանիք) - գյուղ (համայնք)*** փոխհարաբերությունների ամրապնդումը հնարավոր է ***«գյուղացի-հող»*** օբյեկտիվ և սիմվոլիկ փոխհարաբերության ամրապնդման ճանապարհով: Ապրանքաիրային արժեքների անմիջական ազդեցության նվազեցման տեսանկյունից հատկապես անհրաժեշտ են գյուղատնտեսական մանր տնտեսությունների խթանումն ու ձևավորումը: Պետության և շուկայի դերն այս դեպքում ոչ թե ընդգծված միջամտության մեջ է, այլ՝ տնտեսական ռիսկերի նվազեցման և գյուղատնտեսական գործունեության խթանման քաղաքականության մշակման ճանապարհով արտաքին կարգավորման:

Իսկապես, եթե գյուղական միջավայրում արդի արժեքների և նորմերի ներթափանցման վերահսկողությունն ու կարգավորումը անհնարին է չարդարացված, ապա գյուղի ավանդական-համայնական ինքնության տարրերի վերարտադրության կարևորագույն նախապայման է դառնում համարժեք կենսակերպի ապահովումը: Այդ տեսանկյունից ժամանակին արժեքավոր դիտարկում է կատարել Մ. Նալբանդյանը՝ նշելով, որ *երկրագործությունը կարող է դառնալ թե՛ տնտեսական, հասարակական առաջընթա-*

[17] Տե՛ս **Штомпка П.,** նշվ. աշխ., էջ 101-104:

ցի և թե՛ ազգային յուրահատկությունների պահպանման ուղիղ ճանապարհը[18]:

Նմանօրինակ սոցիալական և տնտեսական տեխնոլոգիաները իրատեսական հնարավորություն կարող են ընձեռել գյուղի պահպանման քաղաքականության մշակման և իրագործման, ասել է թե՝ ազգային ինքնության ավանդական տարրերի վերատադրության համար, սակայն դա այս գործընթացի անհրաժեշտ, նշանակալի, բայց ոչ բավարար պայմանն է: Ինչպես արդեն նկատեցինք, քաղաքից-գյուղ արդիականությանը բնորոշ արժենորմատիվ տեղաշարժերը կարող են առաջացնել կիրառվող տեխնոլոգիաների, իրականացվող քաղաքականության լեգիտիմության ճգնաժամ[19], որից հնարավոր է խուսափել այնքան ժամանակ, քանի դեռ «քաղաքն» ինքն է արժևորում և սիմվոլիկ ընկալումների մակարդակում կրում ավանդական-համայնականը:

АРУТЮН ВЕРМИШЯН – ***Село и национальная идентичность в перспективе социальных изменений.*** – В контексте процессов модернизации рассмотрена проблема, связанная с воспроизводством элементов традиционной национальной идентичности на селе. Для выявления проблемы подвергаются анализу взаимоотношения между селом и городом, которые символизируют отношения между традиционным и современным. Чтобы превратить село в своего рода механизм, способствующий сохранению и воспроизводству традиционных элементов национальной идентичности, предлагается аналитическая схема земля–семья–общность. Особо подчеркивается роль, которая принадлежит в этом земледельческому образу жизни.

HARUTYUN VERMISHYAN – ***The Village and National Identity in the Perspective of Social Changes.*** – The article is represented through concentration of sociological questions which leads to the very issue of the reproduction of the national identity in the rural community in frames of the modernization processes. For observing the mentioned issue the rural-urban interrelation is analyzed as a symbolic sphere of traditional-modern interconnection. The multi-observational scheme of land-family-community is presented to reveal the village as a mechanism which sustains and reproduces the traditional elements of ethnic identity highlighting the importance of maintaining the agricultural way of life.

[18] Տե՛ս **Մ. Նալբանդյան**, Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ, Եր., 1954:
[19] Տե՛ս **Habermas J.** Legitimation Crisis. Boston, 1975, էջ 68-75: